«ԳՈԼԴՇԻՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024թ.

ԵՐԵՎԱՆ 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 7

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 8

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ9

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 10

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 12

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
22 Հանրապետության փող.
0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ. +374(10) 544-301/307/309
Էլ. փոստ: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

N 032533

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վահե Գևորգյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«ԳՈԼԴՇԻՆ» ՍՊԸ մասնակցին

«Կարծիքից հրաժարում»

Մեր կողմից իրականացվել է «Գոլդշին» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության (հետայսու՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերության (հետայսու՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Քանի որ մենք չենք կարողացել ստանալ բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ, մենք հրաժարվում ենք արտահայտել աուդիտորական կարծիք «Գոլդշին» ՍՊԸ-ի 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունների, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների առնչությամբ՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Կարծիքից հրաժարման հիմք

Հասույթ: Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպությունը ներգրավված է եղել քրեական վարույթում (կարճվել է 2024 թվականի սեպտեմբերի 30-ին)՝ կապված առանձնապես խոշոր չափերով թաքցրած հասույթի հետ (2020թ.): Այս հանգամանքը առաջացնում է էական անորոշություն և բարձրացնում աուդիտի ռիսկը հասույթի ամբողջականության և ճշգրտության վերաբերյալ, արդյունքում, մենք չենք կարողացել ստանալ բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ վերոհիշյալ տվյալների ստուգման համար:

Բացի այդ, կազմակերպությունը չունի բավարար ներքին վերահսկողական համակարգեր, կանխարգելիչ մեխանիզմներ և հստակ ձևավորված բիզնես գործընթացներ, ինչը ևս խորացնում է անորոշությունը և անընդունելի ռիսկեր ստեղծում աուդիտորական գնահատման համար:

Պաշարներ: 2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա հաշվետվությունների աուդիտի արդյունքում, որը կատարվել է այլ աուդիտորի կողմից, 2024 թվականի հունիսի 28-ին արտահայտվել է վերապահումով կարծիք՝ կապված այն հանգամանքի հետ, որ ընկերությունը չի իրականացրել պաշարների ամբողջական գույքագրում և չի կատարել դրանց հետագա չափումը իրացման զուտ արժեքից և ինքնարժեքից նվազագույնով: Այդ պատճառով, հնարավոր չի եղել այլ աուդիտորական ընթացակարգերով հաստատել պաշարների հաշվեկշռային արժեքի ճշգրտությունը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հաշվի առնելով, որ մեր կողմից ստուգվող հաշվետու ժամանակաշրջանի սկզբնական մնացորդները բխում են այդ ֆինանսական հաշվետվություններից, որոնք արդեն անվստահելի էին, ինչպես նաև այն հանգամանքը, որ կազմակերպությունը չունի բավարար ներքին վերահսկողական համակարգեր, կանխարգելիչ մեխանիզմներ և հստակ բիզնես գործընթացներ, մենք չենք կարողացել համոզվել, որ պաշարների արտացոլումը 2024 թվականի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճշգրիտ է:

Հիմնական միջոցներ: Հողամասերը Խմբի կողմից սկզբնապես չեն ճանաչվել սկզբնական արժեքով՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, փոխարենը դրանք ներկայացվել են կադաստրային արժեքով: Բացի այդ, շենքերի և շինությունների արժեքում 229,440 հազ. դրամ ներառված է նաև կադաստրային արժեքով ճանաչված հողամասերի արժեքը:

Հաշվի առնելով վերոնշյալը, մենք չենք կարողացել աուդիտորական ընթացակարգերի միջոցով ստանալ բավարար և համապատասխան ապացույցներ հողամասերի, ինչպես նաև շենքերի և շինությունների սկզբնական արժեքների ճշգրտության վերաբերյալ:

Հանգամանքի շեշտադրում

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից 28-րդ ծանոթագրությանը, որտեղ ներկայացված է էական նախորդ ժամանակաշրջանների սխալի ուղղման վերաբերյալ տեղեկատվությունը: Խումբը, համաձայն ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական գնահատումներում և սխալներ» ստանդարտի պահանջների, կատարել է նախորդ ժամանակաշրջանների ճշգրտում, որը վերաբերում է 2020 թվականին էականորեն պակաս հաշվարկված շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով ծախսերին: Ճշգրտումը կատարվել է հետադարձ կարգով, և համեմատական տվյալները վերաներկայացվել են: Մեր կարծիքը չի փոփոխվել վերոհիշյալ հանգամանքի կապակցությամբ:

Այլ հանգամանք

«Գոլդշին» ՍՊԸ-ի 31 դեկտեմբեր 2023 թվականին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որի գծով 28 հունիս 2024-ին վերջինս արտահայտել է վերապահումով կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Խումբն կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Խմբի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Խմբի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք

կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Խումբն կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Լուիզա Հովհաննիսյան

Աուդիտոր

27 օգոստոս 2025թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	Ծան.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերաներկայաց-ված	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերաներկայաց-ված
ԱԿՏԻՎՆԵՐ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4	981,430	830,569	808,931
Ներդրումային գույք	5	2,043,675	-	-
Ոչ նյութական ակտիվներ		1,812	633	727
Հետաձգված հարկային ակտիվ	6	14,716	-	27,157
		3,041,633	831,202	836,815
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	7	1,036,600	1,160,289	937,771
Տրամադրված փոխառություններ	8	987,913	238,072	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	798,682	464,664	484,315
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	163,991	313,437	92,193
		2,987,186	2,176,462	1,514,279
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		6,028,819	3,007,664	2,351,094
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Կապիտալ և պահուստներ				
Կանոնադրական կապիտալ	11	50	50	50
Կուտակված շահույթ		1,363,012	30,869	(298,159)
		1,363,062	30,919	(298,109)
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	13	3,152,868	2,010,575	1,209,221
		3,152,868	2,010,575	1,209,221
Ընթացիկ պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	628,999	251,876	316,272
Վարկեր և փոխառություններ	13	815,010	517,385	982,973
Շահութահարկի գծով պարտավորություն		68,880	196,909	140,737
		1,512,889	966,170	1,439,982
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		6,028,819	3,007,664	2,351,094

Կցախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. օգոստոսի 27-ին:

Գեր Ատեփանյան
Տնօրեն

Նելիա Մանուկյան
Փարվանյան ընդհանրինգ ՍՊԸ-ի ներկայացուցիչ

1-30 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	14	7,850,952	6,756,421
Վաճառքի ինքնարժեք	15	(5,979,885)	(5,226,971)
Համախառն շահույթ		1,871,067	1,529,450
Այլ եկամուտ	16	192,197	76,943
Ձեռքբերման գնի տարբերությունից առաջացած շահույթ	17	1,037,431	-
Իրացման ծախսեր	18	(757,001)	(523,755)
Վարչական ծախսեր	19	(531,972)	(355,574)
Այլ ծախսեր	20	(199,071)	(64,863)
Գործառնական գործունեությունից շահույթ		1,612,651	662,201
Ֆինանսական ծախս, զուտ	21	(196,042)	(200,478)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		9,625	(45,179)
Շահույթ մինչև հարկերը		1,426,234	416,544
Շահութահարկի գծով ծախս	22	(94,091)	(87,516)
Տարվա շահույթ		1,332,143	329,028
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		1,332,143	329,028

1-30 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ/(վնաս)	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	50	(106,499)	(106,449)
Սխալի ուղղում		(191,660)	(191,660)
2023թ. հունվարի 1-ի դրությամբ (վերանայված)	50	(298,159)	(298,109)
Տարվա շահույթ	-	329,028	329,028
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	329,028	329,028
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք 2023 դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	30,869	30,919
Տարվա շահույթ	-	1,332,143	1,332,143
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	1,332,143	1,332,143
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք 2024 դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	1,363,012	1,363,062

1-30 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տարվա շահույթ	1,332,143	329,028
Ճշգրտումներ՝		
Շահութահարկի գծով ծախս	94,091	87,516
Մաշվածություն	162,374	104,163
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)	(9,625)	45,179
Ֆինանսական ծախս	196,042	200,478
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	1,775,025	766,364
Պաշարների փոփոխություն	123,689	(222,518)
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	(332,520)	19,651
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	388,604	(54,672)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	1,954,798	508,825
Վճարված տոկոս	(196,041)	(200,478)
Վճարված շահութահարկ	(236,836)	(4,187)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքեր	1,521,921	304,160
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տրամադրված փոխառություններ	(749,841)	(238,072)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(2,358,090)	(125,707)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(3,107,931)	(363,779)

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	1,439,918	284,708
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	1,439,918	284,708
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(146,092)	225,089
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(3,354)	(3,845)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	313,437	92,193
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	163,991	313,437

1-30 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Գոլդշին» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը (այսուհետ «Մայր ընկերություն») գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2009թ. մարտի 31-ին: Ընկերության գրանցման համարն է 264.110.08589:

«Գոլդշին» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ձեռք է բերել «Գոլդ իքս» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը (այսուհետ «Դուստր ընկերություն»), որը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2024թ. սեպտեմբեր 16-ին: Ընկերության գրանցման համարն է 222.110.1410459:

Ընկերությունները համարվում են շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություններ հանդիսացող իրավաբանական անձինք: Ընկերությունները իր գործունեությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային համաձայնագրերի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Քաղաքացիական օրենսգրքին, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, այլ օրենսդրական և նորմատիվ ակտերին և հաստատված կանոնադրության պահանջներին համապատասխան:

Ընկերությունների կառավարման բարձրագույն մարմինը մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի կառավարման և գործունեության հետ կապված ցանկացած հարցի վերջնական ձայնի իրավունք: Ընկերությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

«Գոլդշին» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության հիմնական գործունեությունն է թիթեղի, պրոֆիլի, տանիքի համալրող դետալների, մետաղական ապրանքների, ցանցերի և այլ շինարարական ապրանքների արտադրությունը: Դուստր կազմակերպության հիմնական գործունեությունը՝ տարածքների վարձակալության տրամադրումն է:

«Գոլդշին» և «Գոլդ իքս» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունների մասնակիցն է Միեր Ստեփանյանը՝ 100 տոկոս:

Գործարար միջավայր

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում սրվել է Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի պատճառով: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, թե երկարաժամկետ առումով:

2024թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի

կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Խմբի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ իր ընթացիկ իրացվելիության վիճակը բավարար է կայուն գործունեության համար: Խմբի պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Տվյալ Համածմբված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՔԵՐ

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Համախմբված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Համախմբված հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով (բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության) և սկզբնական արժեքի մեթոդով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 23-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում»* ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)
- *«Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ»* (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)
- *«Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում»* (ՀՀՄՍ 8 փոփոխություններ)
- *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)
- *«Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ»* (ՀՀՄՍ 12 փոփոխություն)

Բացառությամբ ՀՀՄՍ 1 փոփոխությունների և ստորև ներկայացված ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ի՝ *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»*, փոփոխությունների, մյուս ստանդարտներ և փոփոխություններ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2 *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»*

ՀՀՄՍ 1 փոփոխությունները և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ը տրամադրում են ուղեցույց և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառելու էականության վերաբերյալ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը բացահայտելիս: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին տրամադրել ավելի օգտակար տեղեկատվություն հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին՝

փոխարինելով հաշվապահական հաշվառման «նշանակալի» քաղաքականության բացահայտման պահանջը հաշվապահական հաշվառման «էական» քաղաքականության բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է կազմակերպությունները կիրառեն էականության հայեցակարգը:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

«Փոխանակելիության բացակայություն» (ՀՀՄՍ 21 փոփոխություն)

«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)

ՖՀՄՍ 18 «Համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

3 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 413.89 դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 24-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին և դասակարգված չեն որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների հա-մարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբն դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 24-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.3 Հիմնական միջոց

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Հիմնական միջոցների օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցների՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքերի և շինություններ	20 տարի,
Կառուցվածներ	20 տարի,
Մեքենաներ, սարքավորումներ	1-20 տարի,
Արտադրական, տնտեսական գույք, գործիքներ	5-8 տարի,
Տրանսպորտային միջոցներ	20 տարի,
Այլ հիմնական միջոցներ	1- 20 տարի:

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ են լիցենզիաները և թույլտվությունները, արտոնագրերը, ապրանքային նշանը, համակարգչային ծրագրերը և այլն, որոնք ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել ամորտիզացիայի հաշվարկման դրույքաչափերի, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա ամորտիզացիան վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային ծրագրեր	- 1-10 տարի,
Այլ ոչ նյութական ակտիվեր	- 1-10 տարի:

3.5 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.6 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը այն անշարժ գույքն է (հողամասեր, շենքեր կամ դրանց մասեր), որը պահվում է վարձակալությունից եկամուտ ստանալու կամ գույքի արժեքի աճից օգտվելու նպատակով, և ոչ թե արտադրական կամ վարչական նպատակներով օգտագործման կամ սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար:

Խումբը ներդրումային գույքը հաշվառում է սկզբնական արժեքի մոդելով՝ համաձայն ՖՀՄՍ 40-ի: Սկզբնական ճանաչման պահին ներդրումային գույքը գրանցվում է ձեռքբերման արժեքով, որը ներառում է գնումին ուղղակիորեն վերագրվող ծախսերը: Հետագա հաշվառումը կատարվում է ձեռքբերման արժեքից հանած կուտակված մաշվածքը և արժեքի անկման կորուստները:

Մաշվածքը հաշվարկվում է գծային մեթոդով՝ ակտիվների գնահատված օգտակար օգտագործման՝ 20 տարի ժամկետի ընթացքում:

Վարձակալությունից ստացված եկամուտները ճանաչվում են շահույթ-վնասի հաշվետվությունում որպես եկամուտ, իսկ սպասարկման և պահպանման ծախսերը՝ որպես ընթացիկ ծախսեր:

3.7 Պաշարներ

Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով): Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Ձեռքբերման ծախսումներն են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են կազմակերպությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ հոդվածներ հանվում են: Վերամշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները, ինչպիսիք են աշխատուժի գծով ուղղակի ծախսումները, պատրաստի արտադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և

փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները, որոնք կատարվում են վերամշակելու ընթացքում:

Այլ ծախսումները ինքնարժեքում ներառվում են այն չափով, ինչքանով դրանք կատարվել են պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:

Փոխադարձ փոխարինելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը Մուտք՝ Առաջինը Ելք» (ԱՄԱԵ) մեթոդով:

Պաշարների ինքնարժեքի մեջ չեն ներառվում գերնորմատիվային ծախսումները, պահպանման ծախսումները, վարչական վերադիր ծախսումները և վաճառքի ծախսումները:

Պաշարները հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքի ցանկացած իջեցման գումար մինչև իրացման զուտ արժեք և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք տեղի են ունեցել:

Ոչ իրացվելի պաշարները դուրս են գրվում իրենց հաշվեկշռային արժեքով:

3.8 Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնեմասերի նոմինալ արժեքը:

Կուտակված շահույթը/(վնասը) ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը/(վնասը):

3.9 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական

պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբն վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.10 Հասույթ

Հասույթը ճանաչվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Խմբի կողմից տրամադրված ցանկացած առևտրային զեղչերը:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Խումբն բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

4 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հազար դրամ	Հողամասեր	Շենքեր	Կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրատնտեսական գույք	Կապիտալ վերանորոգում	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք									
2023թ. Հունվարի 1-ի դրությամբ	61,274	443,142	4,674	407,860	55,692	11,461	-	66,175	1,050,278
Ավելացում	3,092	30,059	-	37,893	33,880	3,586	-	19,377	127,887
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	64,366	473,201	4,674	445,753	89,572	15,047	-	85,552	1,178,165
Ավելացում	4,500	-	-	100,311	86,442	753	21,238	70,081	283,325
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	68,866	473,201	4,674	546,064	176,014	15,800	21,238	155,603	1,461,460
Կուտակված մաշվածություն									
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	16,599	257	185,219	6,313	3,744	-	29,215	241,347
Տարվա հաշվարկ	-	17,250	233	72,807	4,530	2,030	-	9,399	106,249
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	33,849	490	258,026	10,843	5,774	-	38,614	347,596
Տարվա հաշվարկ	-	19,010	234	82,646	15,665	2,014	1,109	11,756	132,434
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	52,859	724	340,672	26,508	7,788	1,109	50,370	480,030
Հաշվեկշռային արժեք									
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	61,274	426,543	4,417	222,641	49,379	7,717	-	36,960	771,971
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	64,366	439,352	4,184	187,727	78,729	9,273	-	46,938	830,569
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	68,866	420,342	3,950	205,392	149,506	8,012	20,129	105,233	981,430

Մաշվածության գծով ծախսը 2024թ. կազմել է 132,434 հազ. դրամ, որից 4,656 հազ.դրամը բաշխվել է իրացման ծախսերին, 126,670 հազ. դրամը բաշխվել է վարչական ծախսերին, 1,108 հազ.դրամը գործառնական այլ ծախսերին: (2023թ. կազմել է 106,250 հազ. դրամ, որից 1,755 հազ.դրամը բաշխվել է իրացման ծախսերին, 16,473 հազ. դրամը բաշխվել է վարչական ծախսերին, 622 հազ.դրամը գործառնական այլ ծախսերին, իսկ 87,399 հազ.դրամը՝ արտադրական ծախսերին):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 33,743 հազ. դրամ (2023թ. 21,922 հազ. դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 860,464 հազ.դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ գրամադրված են վարկային պարտավորությունների ապահովման նպատակով:

5 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՒՅՔ

Հազար դրամ	Սկզբն.արժեքով հաշվառվող ներդրում. գույք՝ շինություն	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2023թ. Հունվարի 1-ի դրությամբ	-	-
Ավելացում	-	-
Օտարում	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-
Ավելացում	2,073,417	2,073,417
Նվազեցում	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,073,417	2,073,417
Կուտակված մաշվածություն		
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Տարվա հաշվարկ	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-
Տարվա հաշվարկ	29,742	29,742
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	29,742	29,742
Հաշվեկշռային արժեք		
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,043,675	2,043,675

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,073,417 հազ. դրամ սկզբնական արժեքով ներդրումային գույքը գրավադրված է վարկային պարտավորությունների ապահովման նպատակով:

6 ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	-	27,157
Շահույթում կամ վնասում ճանաչված	14,716	(27,157)
Տարեվերջի մնացորդ	14,716	-

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2024թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31
Չօգտագործված արձակուրդայինի պահուստ	-	13,935	13,935
Պաշարների արժեզրկում	-	781	781
	-	14,716	14,716

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	2023թ. դեկտեմբերի 31
Հարկային վնաս	27,157	(27,157)	-
	27,157	(27,157)	-

7 ՊԱՇԱՐՆԵՐ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հունք և նյութեր	782,416	791,754
Վառելիք	2,863	583
Շինանյութեր	14,652	82
Պատրաստի արտադրանք	87,756	171,321
Ապրանքներ	131,297	176,669
Անավարտ արտադրանք	11,926	19,001
Այլ նյութեր	10,030	879
Պաշարի արժեզրկում	(4,340)	-
	1,036,600	1,160,289

8 ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խումբը 2024թ. ընթացիկ փոխառություններ է տրամադրել կապակցված կողմին 12 տոկոս տոկոսադրույքով:

Փոխառու	Տոկոս	Մայր գումար	Հաշվեգրված տոկոս
Ստեփանյան Միհեր Նորիկի	12%	904,362	83,551

9 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	285,555	47,507
	285,555	47,507
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	469,125	406,544
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	2,280	9,615
Այլ դեբիտորական պարտքեր	41,722	998
	513,127	417,157
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	798,682	464,664

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

25-րդ ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

10 ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԵՎ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	138,093	295,821
Բանկային մնացորդներ՝ դրամով	18,252	8,229
Բանկային մնացորդներ՝ արտարժույթով	-	249
Դրամական միջոցներ ճանապարհին	7,646	9,138
	163,991	313,437

11 ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

11.1 Կանոնադրական կապիտալ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ 2024թ.	Կանոնադրական կապիտալ 2023թ.
1 բաժնեմաս	50	50

Մայր ընկերության միակ մասնակիցն է ՀՀ քաղաքացի Մհեր Ստեփանյանը: Կանոնադրական կապիտալն ամբողջությամբ վճարված է:

12 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր գնումների գծով	294,631	37,864
Ստացված կանխավճարներ	85,520	92,600
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	149,841	109,878
Աշխատավարձի գծով պարտք	20,509	11,284
Չօգտագործված արձակուրդայինի պահուստ	77,416	0
Այլ կրեդիտորական պարտքեր	1,082	250
	628,999	251,876

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Խմբի արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 25-ում:

13 ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազար դրամ

Բանկ	Արժույթ	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Մարման ամսաթիվ	Տոկոսադրույք	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամերիաբանկ ՓԲԸ	USD	04.03.2024	02.03.2029	9.00%	195,107
Ամերիաբանկ ՓԲԸ	USD	23.09.2024	20.09.2034	9.00%	826,828
Ամերիաբանկ ՓԲԸ	AMD	23.12.2024	21.12.2029	14.00%	500,000
Ինեկոբանկ ՓԲԸ	USD	14.06.2022	12.06.2027	8.50%	88,870
Ինեկոբանկ ՓԲԸ	USD	08.06.2023	15.06.2028	9.00%	827,006
Ինեկոբանկ ՓԲԸ	AMD	08.06.2023	08.06.2028	11.00%	365,525
Ինեկոբանկ ՓԲԸ	AMD	04.09.2023	04.09.2028	11.00%	236,235
Ինեկոբանկ ՓԲԸ	USD	02.11.2020	02.11.2025	9.00%	8,788
Ինեկոբանկ ՓԲԸ	USD	21.03.2019	20.03.2026	9.50%	11,872
Ինեկոբանկ ՓԲԸ	AMD	22.12.2021	22.06.2029	9.50%	150,262
Ինեկոբանկ ՓԲԸ	USD	25.09.2019	20.09.2029	9.00%	22,068
Ինեկոբանկ ՓԲԸ	USD	25.09.2019	20.09.2029	9.00%	92,920
Ինեկոբանկ ՓԲԸ	USD	11.02.2022	11.02.2025	8.50%	2,354
Ինեկոբանկ ՓԲԸ	AMD	03.07.2024	03.07.2027	11.00%	133,963
Ինեկոբանկ ՓԲԸ	AMD	03.05.2024	03.05.2029	11.00%	267,157
Ինեկոբանկ ՓԲԸ	USD	12.12.2022	20.12.2027	9.00%	180,242
Ամերիաբանկ ՓԲԸ	USD	18.03.2024	18.09.2024	8.50%	58,681
					3,967,878

14 ՀԱՍՈՒՅԹ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտադրանքի վաճառքից հասույթ	7,245,190	6,400,678
Ապրանքների վաճառքից հասույթ	569,020	344,186
Ծառայությունների մատուցումից հասույթ	36,742	11,557
	7,850,952	6,756,421

15 ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	5,541,453	5,009,080
Վաճառված ապրանքների ինքնարժեք	408,150	217,891
Ծառայությունների մատուցման ինքնարժեք	30,282	-
	5,979,885	5,226,971

16 ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազար դրամ	2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պաշարների գույքագրումից առաջացած եկամուտ	187,646	60,277
Նյութական վնասի փոխատուցումներից եկամուտներ	83	9,014
Անհուսալի կրեդիտորական պարտքերի դուրս գրումից եկամուտներ	2,572	4,257
Արտարժույթի փոխարկումից եկամուտ	-	889
Այլ եկամուտ	1,896	2,506
	192,197	76,943

17 ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՇԱՀՈՒՅԹ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում «Գոլդշին» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը ձեռք է բերել «Գոլդ իքս» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը (այսուհետ՝ «Դուստր ընկերություն»), որը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2024թ. սեպտեմբերի 16-ին (գրանցման համար՝ 222.110. 1410459):

Ըստ անկախ գնահատողի `«Կոստ Կոնսալտ» ՍՊԸ-ի կողմից իրականացված գնահատման, դուստր ընկերության ներդրումային գույքը գնահատվել է 2,060,000 հազ. դրամ:
Ձեռքբերման օրվա դրությամբ դուստր ընկերության զուտ ակտիվները կազմել են 2,061,191 հազ. դրամ, որը ներառում է.

- Հասարակ բաժնետոմսեր – 63,144 հազ. դրամ
- Նախորդ տարիների չբաշխված շահույթ– 1,998,047 հազ. դրամ

«Գոլդշին» ՍՊԸ-ի կողմից դուստր ընկերության ձեռքբերման համար վճարված գինը կազմել է 1,023,760 հազ. դրամ: Ձեռքբերման գնի և ձեռք բերված զուտ ակտիվների իրական արժեքի տարբերությունը կազմել է 1,037,431 հազ. դրամ, որը ճանաչվել է որպես ձեռքբերման գնի տարբերությունից առաջացած շահույթ և արտացոլվել է հաշվետու ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում՝ որպես եկամուտ:

18 ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի վարձատրության ծախսեր	424,001	254,190
Տրանսպորտային և ապահովագրական ծախսեր	180,515	155,921
Հիմնական միջոցների մաշվածություն, նորոգման և սպասարկման ծախսեր	4,656	1,801
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	42,866	44,333
Այլ իրացման ծախսեր	104,963	67,510
	757,001	523,755

19 ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի վարձատրության ծախսեր	363,034	246,700
Հիմնական միջոցների մաշվածություն, նորոգման և սպասարկման ծախսեր	49,309	16,993
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	5,691	8,742
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	5,432	7,377
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	56,924	25,578
Աուդիտորական, խորհրդատվական ծախսեր	12,289	12,228
Բանկային և ապահովագրական ծախսեր	31,188	22,733
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	3,465	6,501
Այլ ծախսեր	4,640	8,722
	531,972	355,574

20 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տույժ, տուգանքներից ծախսեր	84,130	16,921
Արտարժույթի փոխարկման ծախսեր	20,496	25,722
Պաշարների դուրսգրումից ծախսեր	4,801	10,107
Չօգտագործված արձակուրդայինի պահուստի գծով ծախս	77,416	-
Այլ ծախսեր	12,228	12,113
	199,071	64,863

21 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍ, ԶՈՒՏ

Հազար դրամ	2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկերի գծով տոկոսային ծախս	280,754	204,479
Ֆինանսական եկամուտ	(84,712)	(4,001)
	196,042	200,478

22 ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	108,807	60,359
Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթ. 6)	(14,716)	27,157
	94,091	87,516

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	1,426,234		416,544	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	256,723	18%	74,978	18%
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	(162,632)	-11.40%	12,538	3.01%
Շահութահարկի գծով ծախս	94,091	6.60%	87,516	21.01%

23 ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

23.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների, ներդրումային գույքի և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների, ներդրումային գույքի և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների, ներդրումային գույքի և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների, ներդրումային գույքի և ոչ նյութական ակտիվների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա համախմբված ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

23.2 Կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

Պաշարների արժեզրկում

Խումբը պարբերաբար գնահատում է պաշարները՝ հայտնաբերելու հնարավոր արժեզրկումը: Զուտ իրացվելի արժեքի որոշումը պահանջում է կառավարման կողմից էական դատողություններ և գնահատումներ, մասնավորապես՝ կապված հնարավոր վաճառքի գնի, պաշարների ֆիզիկական վիճակի, շուկայում պահանջարկի, ինչպես նաև դրանց իրացման և պահեստավորման հետ կապված ծախսերի հետ:

Այս գնահատումների արդյունքում Խումբը որոշում է, թե արդյոք անհրաժեշտ է պաշարների արժեզրկման համար ձևավորել պահուստ:

Խումբը զուտ իրացվելի արժեքի որոշման գործընթացում կիրառել է էական գնահատումներ և դատողություններ՝ հիմնվելով հաշվետու ժամանակաշրջանի ավարտին առկա շուկայական տվյալների, ինչպես նաև Խմբի ներքին վերլուծությունների և կառավարման լավագույն գնահատականների վրա:

24 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

24.1 Էական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

24.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեք		
Առևտրային դեբիտորական պարտքեր	285,555	47,507
Տրամադրված փոխառություններ	987,913	238,072
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	163,991	313,437
	1,437,459	599,016

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեք		
Վարկեր և փոխառություններ	3,967,878	2,527,960
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	294,631	37,864
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	4,262,509	2,565,824

25 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբն ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են՝ շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Խումբն ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբն կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբն ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Խումբն գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով, եվրոյով և այլ արժույթներով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ Հոդված	ԱՄՆ դոլար
Ֆինանսական ակտիվներ	
Մնացորդներ բանկերում	746
	746

Ֆինանսական պարտավորություններ	
Վարկեր և փոխառություններ	2,927,454
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	226,751
	3,154,205
Զուտ ենթարկվածություն	(3,153,459)

2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ Հոդված	ԱՄՆ դոլար
Ֆինանսական ակտիվներ	
Մնացորդներ բանկերում	249
	249
Ֆինանսական պարտավորություններ	
Վարկեր և փոխառություններ	1,617,245
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17,648
	1,634,893
Զուտ ենթարկվածություն	(1,634,644)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, եվրոյի և այլ արժույթների նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն	
	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	315,346	163,464

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբն ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները:

2024թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)			
Մինչև 6 ամիս	294,631		294,631
6 ամսից մինչև 1 տարի		815,010	815,010
1 տարուց ավելի		3,152,868	3,152,868
	294,631	3,967,878	4,262,509

2023թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)			
Մինչև 6 ամիս	37,864		37,864
6 ամսից մինչև 1 տարի		517,385	517,385
1 տարուց ավելի		2,010,575	2,010,575
	37,864	2,527,960	2,565,824

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը ցածր են, քան անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

26 ԿԱՊԻՏԱԼԻ ՌԻՍԿ

Խումբն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Խմբի կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալն ու կուտակված շահույթը:

Ղեկավարությունը գնահատում է Խմբի կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Խմբի վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Խումբն կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված

ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Խումբն կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Խումբն վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Զուտ պարտք		
Վարկեր և փոխառություններ	3,967,878	2,527,960
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(163,991)	(313,437)
	3,803,887	2,214,523
Ճշգրտված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	1,363,012	30,919
	1,363,012	30,919
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	2.79	71.62

27 ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

27.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբն չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբն համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

27.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

28 ՀԱՄԱԴՐԵԼԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

հազար դրամ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (հատված)	01 հունվար 2023թ. (նախքան վերաներկայացումը)	աճ/ (նվազում)	01 հունվար 2023թ. (վերաներկայացումից հետո)
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ	50		50
Կուտակված շահույթ	(106,499)	(191,660)	(298,159)
	(106,449)	(191,660)	(298,109)
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	261,162	55,110	316,272
Վարկեր և փոխառություններ	982,973		982,973
Շահութահարկի գծով պարտավորություն	4,187	136,550	140,737
	1,248,322	191,660	1,439,982

29 ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐ

Խմբի կապակցված կողմերը ներառում են մասնակիցներին, ընհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նկարագրված է ստորև:

29.1 Վերահսկողություն

Խմբի միակ մասնակիցն է ՀՀ քաղաքացի Մհեր Ստեփանյանը (100% բաժնեմաս):

29.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները՝

Հազար դրամ

Գործարքներ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տրված առհաշիվ գումարներ	-	841
Տրված փոխառություններ	987,913	238,072
Տրված կանխավճար	1,620	-
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	-	250

29.3 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	25,466	12,586

30 ՀԵՏՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025 թվականի ընթացքում մայր ընկերությունը հայտարարել և վճարել է 283,000 հազար դրամ շահաբաժին։